

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաբանիչը բառին 2 կոպեկ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԲԵՐԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքիայում ապրող ազգութիւնները. Մեր արդիւնաբերութեան զարգացումը. — Ներքին Տեսչութիւն. Մատենագրական հայեացք. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհարումներ մահմեդականների և քրիստոնեաների մէջ. Մազազական հարցը. Ազարեան պատերազմը. Յունաց պատերազմարանը և թիւրքաց կառավարութիւնը. Նամակ Պարսկաստանից. — Հեռագրութիւն. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Ահարկներ.

ԹԻՒՐԻՔԻԱՅԻՄ ԱՊՐՈՂ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն խուլ, ներքին թշնամութիւնը, որ սրանից տասն, քսան տարի առաջ նկատուելի էր թիւրքաց պետութեան սահմաններում ապրող զանազան ազգութիւնների մէջ, այսօր այնպիսի սուր, կատաղի բնաւորութիւն է ստացել, որ ստիպում է կամայական կանգ առնել այդ երեւոյթի վրա:

Սրանից տասն-քսան տարի առաջ Փոքր-Ասիայի զաւառներում, մանաւանդ թիւրքաց Հայաստանում ապրող Հայ, թիւրք, քրդեր և այլ ազգութիւնների ներքին թշնամութեան միակ պատճառը կրօնն էր: Կրօնական մոլեռանդութիւնը, քրիստոնեայ և մահմեդական կրօնների ահապահ տարբերութիւնը կամայական մի ներքին, թէև շատ անգամ անտեսանելի թշնամութիւն էր ծնեցնում այդ կրօնները դաւաճող ազգութիւնների մէջ:

Սակայն վերջին տարիների ընթացքում այդ կրօնական թշնամութեան վրա աւելացան և ուրիշ պատճառներ, — պատճառներ,

որոնք շատ լաւ յայտնի են ամենքին, — երբ հետեանք այն եղաւ, որ այս րօպէիս փոքր-ասիական ազգութիւնների, յատկապէս թիւրքաց Հայաստանում ապրող թիւրք, Հայ և քրդերի մէջ առաջ է եկել մի սոսկալի անտառ զօնիղմ, մի սարսափելի ներքին թշնամութիւն, որ սպառնում է ամեն րօպէ պայթել և առաջ բերել ներքին, կրօնական կամ ցեղական արիւնահեղ ընդհարումներ:

Դա փաստ է:

Եւ այս րօպէիս թիւրքիայի թէ վարչական, թէ քաղաքական ու անտեսական ներքին պայմանները ոչ թէ միայն չեն նշարկաւորում այդ ներքին թշնամութեան թուլանալուն, ոչ թէ միայն չեն կանգնեցնում այդ կրօնական առեւտրութիւնը, որ րօպէ առ րօպէ աճում է, այլ ընդհակառակը, աւելի է սաստկացնում և ներքին մէջ ապրող ազգութիւնների դէպի միմեանց ունեցած ատելութիւնը, աւելի է սիրտ են տալիս այն տարբերին, որոնք ձգտում են սաստկացնել այդ ներքին թշնամութիւնը:

Մենք շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու թիւրքաց Հայաստանում, կամ առհասարակ Փոքր-Ասիայում ապրող ազգութիւնների թիւրքերի, Հայերի, քրդերի, թիւրքերի ներքին Համերաշխութեան մասին, այն միտքը պաշտպանելով, որ այդ բոլոր ազգութիւնների ընդհանուր շահը, անտեսական և քաղաքակրթական ազգական պահանջում է, որ այդ ազգերը մուսուլմանական տան իրանց կրօնական թշնամութիւնը, զոպեն իրանց ցեղական թշնամութեան զգալունքները, և իրեւ մի և նոյն երկրի մի և նոյն Հայրենիքի բնակիչներ, աշխատեն իրանց շահերը պաշտպանել:

Թեմա...

Այդ բաւական չէ. — Լուրջ, ծանր խօսակցութիւնը իսկոյն յօգնեցնում է բոլորին. որ և է ծանրակշիռ հարց, որ և է հետաքրքիր մտաւոր կամ քաղաքական շարժման լուր: Բնականաբար ցնցում առաջ բերում, փոխանակ իրարանցում դնելու, առանց տպաւորութեան զալիս, դնում է. և եթէ մեր ինտելիգենցիան մի քանի օր դրանով զբաղվում է, այն էլ միայն իբրեւ մի անցողական նորութիւն:

Իդէալների փոխանակ մարդկանց սրտերի վրա տիրապետել են առօրեայ մանր, մուր հաշիւներ. քննադատական ոգու տեղը թաղաւորում է բամբակաւոր գոյնի, մեր ինտելիգենցիայի շրջաններում խօսակցութեան սովորական նիւթը դարձել է կամ մի և է վանական անշնան դէպք, կամ մի և է դպրոցական դժուած խնդիր, և կամ որ և է հոգեբանական փոփոխութիւն:

Հազարաւոր գաղթականներ թշուառ վիճակը, որոնք ամեն օր մեզանից հաց են աղբւրսում, եւ նշանաւոր դէպք, որ ամբողջ քաղաքակրթութիւնը աշխարհը տակն ու վրա է անում, կամ, օրինակ, միմիայն զաւր մեր երկրը, որ յարուցանում է տանտեսական նշանաւոր հարցեր, և կամ վերջապէս Սասունի մէջ տեղի ունեցող շարժումները, որոնք այսօր թիւրքաց կառավարութեան ուշադրութիւնն են կլանել, — այդ բոլորը մեր կողմից ինտելիգենցիային այնքան չէ հետաքրքրում, որքան այն թէ՛ այս ինչ վարդապետը ինչու եպիսկոպոս դարձաւ, կամ այն ինչ երբ էլ միմիայն այն ինչ եպիսկոպոսը ներս մտաւ, որ և է վերաբաւորի մասին, աշխատելով զբոսել սրա կամ նրա փառապիտեութիւնը, աշխատելով լարել մէկին միւսի դէմ...

Եւ այդպիսով դուրս է գալիս, որ այդ թերթերի գոյութեան միակ նպատակն է. — կամ հայտնի է Վշակը և նրա խմբագրութեան բոլոր անդամներին, որ դրանց փնջալի է եղել տանտեսական անարդարութիւնը, կամ վերաբաւորի մասին, որ և է վերաբաւորի մասին, աշխատելով զբոսել սրա կամ նրա փառապիտեութիւնը, աշխատելով լարել մէկին միւսի դէմ...

Եւ այդ միջոցին չը կայ մի գործող ոյժ, չը չը կայ մի ոգեւորող ձայն, որ հնչէր այդ մի և է լայն տարածութեան մէջ և ցնցէր մարդկանց թմրած սրտերը: Նշան էլ մարդիկ...

Տխուր չէ միթէ...
Խ. Մարտիան

պանել, իրանց կուլտուրական զարգացման գործը առաջ տանել ընդհանուր ոյժերով, ներքին համերաշխութեամբ, ձեռք ձեռքի տուած:

Տարաբաղաբար այդ հիմնական, համակրելի և թիւրքիայում ապրող բոլոր ազգութիւնների համար անպայման ձեռնտու զաղափարը անկարող է իրագործել այն սերունդը, որ այժմ ապրում է թիւրքիայում, և որի մարմին և արիւնի մէջ է մտել կրօնական կամ ցեղական անմիտ թշնամութեան զգացմունքը: Թիւրքիայում, ժամանակակից սերունդին պատկանող թիւրքը, քուրդը, նոյն իսկ Հայը կամ յոյնը չեն կարողանում ներշնչվել այդ զաղափարով, չեն կարողանում ըմբռնել այդ մտքի անպայման օգտակարութիւնը, նոյն իսկ իրանց սեփական շահերի համար, և այդ պատճառով իրագործել այդ զաղափարը նրանց ոյժերից վեր է, նրանց հասկացողութիւնից բարձր: Պատճառները հասկանալի են:

Մեզ ֆիւմ է սպասել, որ թիւրքիայում ապրող զանազան ազգութիւնների նոր սերունդը, որը, եթէ ոչ ամբողջապէս, գէթ մասամբ կրթվել և կրթվում է նոր զաղափարներով, ներշնչված նոյն երկրի, նոյն Հայրենիքի մէջ ապրող ազգութիւնների համերաշխութեան տենչանքով, իրագործի այդ զաղափարը, և այժմեան կրօնական թշնամութեան փոխարէն հաստատի փոխադարձ համերաշխութիւն, այժմեան անապօքի միտքին քարոզի բարեկամութիւն, յանուն ամբողջ երկրի զարգացման, յանուն այդ երկրում ապրող բոլոր ազգերի կուլտուրական առաջադիմութեան:

Թիւրքիայում Հայոց տարրը, իբրեւ ա-

Ինչքան մանրացան...

Նոյնը չէ միթէ Թիֆլիսի մի երկու թերթերում, որոնք «հայոց ազգի փրկութիւնը հայոց եկեղեցու մէջն է» ասելով, արդէն այնտեղ են հասել, որ սկսել են, իբրեւ մի ազգաշահ նորութիւն, հաղորդել, թէ էլ միմիայն մի օր և է քարտուղար օրական քանի ֆունտ հաց է ուտում, թէ որ և է եպիսկոպոս որ ժամին ում այցելութիւն դնաց, և կամ մի օր և է եպիսկոպոսի ծառայի, կամ փոքրաւորի կենսազգութիւնը, հետք էլ, ի հարկէ, մի բեռը գովասանքներ...

Հիմարիտ է, այդ փարաւա մոլ թերթերը, իրանց ամբողջ գոյութեան ընթացքում, միշտ հոգեբանականներով են ապրել, — բայց երբեք նրանք այն աստիճան չէին մանրացել, ընկել և ոգորմելի դարձել, որքան այժմ Նայեցը, դրանց եռանդը, ոյժը, ոգեւորութիւնը ամբողջապէս ուղղած է մի անձի՝ Արիստակէս եպիսկոպոսի դէմ, և այն էլ ոչ թէ մի ամիս, երկու ամիս, այլ տարիներ շարունակ: Ամիս ամիս ետեից այդ թերթերը իրանց էջերը լցնում են կամ անմիտ, անտեղի յարձակումներով մի Արիստակէսի, մի Նայեցի, կամ մի օր և է վարդապետի, կամ վերաբաւորի դրանց օր և է բարեկամի դէմ, և կամ տպագրում են անվերջ, անյատակ, չը տեսնված շոգորթութիւններ էլի օր և է վերաբաւորի մասին, աշխատելով զբոսել սրա կամ նրա փառապիտեութիւնը, աշխատելով լարել մէկին միւսի դէմ...

Եւ այդպիսով դուրս է գալիս, որ այդ թերթերի գոյութեան միակ նպատակն է. — կամ հայտնի է Վշակը և նրա խմբագրութեան բոլոր անդամներին, որ դրանց փնջալի է եղել տանտեսական անարդարութիւնը, կամ վերաբաւորի մասին, որ և է վերաբաւորի մասին, աշխատելով զբոսել սրա կամ նրա փառապիտեութիւնը, աշխատելով լարել մէկին միւսի դէմ...

Եւ այդ միջոցին չը կայ մի գործող ոյժ, չը չը կայ մի ոգեւորող ձայն, որ հնչէր այդ մի և է լայն տարածութեան մէջ և ցնցէր մարդկանց թմրած սրտերը: Նշան էլ մարդիկ...

Տխուր չէ միթէ...
Խ. Մարտիան

մենատառադաճում և կուլտուրային ընդունակ տարր, արդէն ներշնչվում է այդ զաղափարով: Թիւրքերի մէջ էլ արդէն կայ մի նոր կուսակցութիւն, «Ներխառնար» Թիւրքիա՝ անունով, որը նոյնպէս դաւանում է այդ լայն, քաղաքակրթական զաղափարը:

Մեզ ֆիւմ է միայն ցանկալի, որ այդ նոր, համակրելի ուղղութիւնը, որը գուցէ թերահաւատներին ուսուցիչ կը թվի, անարգել աճի և տարածվի ամբողջ ազգականութեան մէջ, — որովհետեւ զրանից պէտք է բոլոր թիւրքիայում ապրող բոլոր զաւառներին պատկանող ազգութիւնների անտեսական, մտաւոր և կուլտուրական վերածնութիւնը:

ՄԵՐ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԿԱՑՈՒՄԸ

Երկրագործութեան միջոցով ներկայումս թիւրքիայում առիթ տուեց բազմաթիւ խօսակցութիւնների և խորհրդածութեան զարգացման վերաբերմամբ: Միմիայն մեծ համակրութիւն ցոյց տուեց այն ծրագրերին, որոնք մշակվում են մեր երկրում՝ զիւղատնտեսական գիտութիւն և արհեստ տարածելու նպատակով: Իր կողմից նա խոստացաւ բարոյական մեծ աջակցութիւն:

Բայց նիւթական նպաստների վերաբերութեամբ նա խօսեց շատ զգոյշ, նախօրոք ոչինչ հաստատ խոստումներ չը տալով, որովհետեւ նիւթական նպաստների խնդիրը չէ կախված միայն երկրագործութեան միջոցով, այլ և ֆինանսների միջոցով:

ցառութիւն չէ կազմում, և լրացնում է այդ տըխուր պատկերը: Երբեք, այդ, երբեք գուցէ էջ միմիայն մարդիկ այնքան չէին մանրացել, որքան այժմ, երբեք այնքան չէին ոգեւորվել ինտելիգենցիայի, բանաստեղծների, մանր մուսի, գեծած, կօպէկանոց հայրենիքով, — որքան այժմ Այնտեղ օրերով մտածում, վիճում, խօսում են, թէ ինչու այս պաշտօնը այն ինչ եպիսկոպոսի ծառային տուին, և ոչ թէ միւս եպիսկոպոսի ծառային, օրերով կուտում են, թէ ինչու նա նրա մօտ ճաշի գնաց, ինչու նա տեղից վեր չը կացաւ, երբ միւսը գալիս էր, և այդպիսի անվերջ յիմարութիւններ...

Երբ վանական ներ, մեռցնող շրջանից դուրս ոչինչ չը տեսած մարդիկ այդպէս են անում, — այդ զարմանալի չէ: Երբ ոչինչ զաղափար, ոչինչ ձգտում չունեցող, անշնորհ թերթերը իրանց էջերը դարձնում են կեղտոտ հայհոյանքների և աւելի կեղտոտ շոգորթութիւնների ասպարեզ, — այդ էլ զարմանալի չէ:

Բայց շատ զարմանալի և շատ ցաւալի է, որ մեր ինտելիգենցիայի շրջաններում, թէ Թիֆլիսում, և թէ զաւառներում, — հասարակական քննադատութեան տեղ սկսել է թաղաւորել բամբակաւոր, իդէալի փոխարէն՝ առօրեայ դժուած հաշիւները, յափշտակութեան, ոգեւորութեան փոխարէն՝ մեռելութիւն, հիպոթիզան, թմրութիւն...

Մեր ինտելիգենցիան մանրացաւ, իսկ ժողովուրդը նրանից մեծ մեծ գործեր չսպասում...

Եւ այդ միջոցին չը կայ մի գործող ոյժ, չը չը կայ մի ոգեւորող ձայն, որ հնչէր այդ մի և է լայն տարածութեան մէջ և ցնցէր մարդկանց թմրած սրտերը: Նշան էլ մարդիկ...

Տխուր չէ միթէ...

Խ. Մարտիան

նխատրութիւնը, և ընդհանուր պետական իրաւաբանական կազմութեան վրա ազդող կառավարչական բոլոր բարձր շրջանները: Մինիստրը իր ծառերի մէջ, որ նա խօսեց կայսերական կովկասեան Կիւղաստանական ընկերութեան նիստին և նրա պատուին տրված ճաշկերոյթին, երկու հիմնական հայեացքներ յայտնեց, որոնք դարձնում են իրանց վրա առանձին ուշադրութիւն:

Մինիստրը արդիւնադրական լայն դարձացում հնարաւոր է համարում միայն այն ժամանակ, երբ հասարակական տարրերը կը միանան մինիստրութեան հետ միասին աշխատելու համար: Երբ զիւղաստանեան, երկրագործները, զիւղատնտեսական հիմնարկութիւնները գործակից կը լինեն մինիստրութեան: Այդ միութեան, այդ գործակիցութեան, այդ համերաշխութեան մէջն է նա տեսնում արդիւնադրական զարգացման հաստատ գրաւականը: Եւ նա հրաւիրում է ամենքին դիմել մինիստրութեան, յայտնել իրանց հայեացքները, խորհրդածութիւնները և հաւատարմորէն ամեն մի բարի խորհուրդ ուշադրութեան կանուխ:

Մինիստրի միւս հայեացքը այն է, որ կովկասի արդիւնադրութեան զարգացումը պէտք է ուղղված լինի դէպի այն արդիւններ, որոնք բնորոշ, յատուկ են այդ երկրին և միջազգային մրցման մէջ բարձր տեղ ունեն բնածին: Ուրիշակ բերելով հիւսիսային և միջին Ռուսաստանը, նա ասեց, թէ ինչ կարող է անել այնտեղ գիւղատնտեսը, երբ նա կարող է միայն հացահատիկներ բուսցնել և եթէ դրանք գինը իջաւ, գիւղատնտեսը չէ կարող ձեռնարկել ուրիշ բոյսերի մշակութեան և դիմել ուրիշ միջոցների իր հողային հարստութիւնը շահեցնելու համար: Եւ ներկայումս այդ տեսակ վիճակի մէջ է Ռուսաստանի գիւղատնտեսը:

Մինչդեռ կովկասի արդիւնադրութեան այնպիսի առարկաներ, ինչպէս են խաղողը, բամբակը, շերամը, ծխախոտը և այլ նոյնատեսակ նիւթերը և բոյսերը միշտ համեմատաբար աւելի մեծ արդիւններ կը տան, քան թէ Ռուսաստանի տափարակների նոյնաբանակ հողերը: Կովկասը ունի հարաւի արեգակ, բուսականութեան աճման երկարատեւ շրջան, բուսական արդիւնների բազմազանութիւն, մի խօսքով այն բոլորը, ինչ հարկաւոր է թանգազին և մեծաքանակ արդիւններ ստանալու հողերը:

Կովկասին, ասեց մինիստրը, պակասում է արդիւնադրութեան կատարելագործութիւն և գիւղատնտեսական արդիւնների շահաւէտ վաճառականութիւն: Ահա այդտեղ է մեր աշխատելու, մեր գործելու ասպարէզը: Կովկասը մեծ ապագայ ունի և ուրիշ արդիւնադրութիւնների վերաբերմամբ: Միայն պահանջվում է մեծ և լուրջ աշխատանք, կառավարչական և հասարակական օյժերով միասին:

Մինիստրի համակրական հրահրները թող արձագանք գտնեն մեր հասարակութեան շրջաններում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՅԵԱՅԻ

Վերջին տարիներս Վիեննայի Միջազգային զուգորդութեամբ հայերէն թարգմանում և փոքրիկ գրքոյկներով հրատարակում են եւրոպական զանազան լեզուներով լոյս տեսնող հայագիտութեան վերաբերեալ նորագոյն աշխատութիւնները, որոնք մեծ մասամբ նախապէս մաս-մաս տպագրում են Հանդէս Ամսթերդամի մէջ:

Այսպէս, նրանք երկու տարվայ ընթացքում տպագրեցին—Մարիի (Վառնայի) ուղեորութիւնից դէպի Հայս (Բուսերէնից), Կարիւրիի Եւրոպայի աղբեր Մովսիսի խորհանգումը (երկու տետրակ, Փրանսերէնից), Կոնիքիի Գննութիւնը զբոսը Գալիի Անյաղթի (անգլիերէնից), Փ. Տէր-Մովսիսեանի (այժմ Մեքսիկոյ վարդապետ) Հայ գիւղական տունը (գերմաներէնից): Այս թարգմանութիւններով Վիեննայի Միջազգային միջոց են տալիս ուսումնասիր հայերին՝ ծանօթանալու եւրոպացի գիտնականների հայագիտութեան:

Թեան վերաբերեալ նոր աշխատութիւնների հետ, որոնք այլապէս անմատչելի պէտք է մնային շատերին, կամ օտար լեզուների անձանցութեան, կամ մասնաւոր յարաբերութիւնների դժուարութեան պատճառով:

Վերջին գրքոյկը—«Ուսումնասիրութիւնը հայերէնի փոխառեալ բառերից», որ գերմաներէնից թարգմանել է անխոջ աշխատատէր Հ. Յ. Տաւադիւրը, բաղկացած է երեք մասերից—Հիւրընկեր (Վեմական փոխառեալ բառերի հիւսիսային մէջ), Բրոնչեմանի «Յունական փոխառեալ բառերի հիւսիսային մէջ» և դարձեալ Հիւրընկերի Հայկական յետմեջ: Այս երեք մասերից կարեւորագոյնն է առաջինը, որտեղ անուանի հայագէտը, իրան յատուկ հմտութեամբ և զգուշութեամբ հաւաքել և համեմատել է 211 բառեր, որոնք ասորիւնից և արաբերէնից մտել են հայերէնի մէջ: Այս աշխատութիւնը ոչ միայն զուտ լեզուագիտական նշանակութիւն ունի, այլ և հայոց հին քաղաքակրթական պատմութեան ուսումնասիրութեան վրա լոյս է ձգում:

Եւ իրաւի, երբ մենք տեսնում ենք մի շարք առօրեայ գործածութեան անհրաժեշտ բառեր, որ մեր նախնիք ընդունել են ասորիւնից կամ արաբերէնից (վերջիններից) ժ. Գ. դարուց յետոյ մասնաւոր) և երբ մտածում ենք, որ այդ բառերի հետ մեր աշխարհն են մտել և այդ բառերի նշանակած առարկաները կամ գաղափարները՝ չենք կարող չը խոստովանել, որ ասորիւնը, հին դարերում և արաբները միջին դարերում քաղաքակրթական մեծ ազդեցութիւն են ունեցել մեր կենսական վրա, սկսած անայն դարերից, երբ Կոնստանդնուպոլիսը մինչև Կոնստանդնուպոլիս և գիտական գաղափարներ:

Յիշելով 211 բառերից մէջ բերնք միայն մի քանիսը, որոնք ներկայումս էլ գործածական են ամեն տեղ: Ասորիւնից մեք ընդունել ենք հետեւեալ առարկաներն ու գաղափարները—աբեղայ, աքսոր, գաղթ(ել), գուր, գուրպայ, գոյգ, թարգման, թրթուր, լաւնութ, խմոր, ծով, ծրար, կաթնալ, կացին, կեղեղ, կնիք, հալիւ, ձէթ, մազաղաթ, մախաթ, մանգալ, մանիշակ, մաշկ, մաքս, շաքար, շուկայ, շուշան, ուրբաթ, սատանայ, սալիլի, սեռն(իսկոն), սուխ, սուսեր, սպեղանի, տերեւ, տղայ, ցեց, փրկ(ել), քահանայ, քաղաք, քարոզ, քնար: Արաբերէնից ընդունել ենք—աղապ, բալասան, բակլայ, զիլ (ձայն), թաս, լոսթի, կլայեկ, մախաթ, մլրատ, շամաթ, պատրիճան (բորիշան), Եւսիւ, մնրուկ, և այլն:

Եթէ արանց վրա աւելցնենք քանապակի աւելի անհրաժեշտ գործածական բառեր, որոնք մենք, նրանց նշանակած առարկաներով ու գաղափարներով հանդերձ, ընդունել ենք հին և նոր պարսիկներից ու յոյներից՝ կը հասնե՞ք այն եզրակացութեան, որ առանց օտար ազդերի հետ չիվելու և նրանց քաղաքակրթութեան օգտակար արդիւններն իւրացնելու՝ մենք վայրենի մի ցեղ կը լինէինք, զուրկ նոյն իսկ ամենատարրական պիտոյքներից և գաղափարներից, և մեր լեզուն, չունենալով այդ հազարաւոր օտար բառերը և դրանցից անհրաժեշտ էլի մի տասնեակ հազար բառ՝ աղբաւ, խոջալի մի բան կը լինէր, որ միանգամայն կը համապատասխանէր մեր յիշած մտաւորական և տնտեսական վայրենութեան:

Բրոնչեմանի աշխատութեան նիւթը (յունարէնից հայերէնի մէջ մտած բառեր) նոր չէ.—նա առնված է գլխաւորապէս վենետիկցիների Հայկական մեծ բառարանից. նոր է հայացած յունարէն բառերի ձայնագրեալական երկայնութիւնի սրտեմական կարգի վերածումը: Ինչպէս այս, նոյնպէս և Հիւրընկերի Հայկական յատուկ անուանց վրա՝ կանգ առնել հարկ չենք համարում, որովհետեւ նրանք զուտ մասնագիտական նշանակութիւն ունեն:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՅ

Սեպտեմբերի 15-ին

Բազուի նիւթական հարստութեան հուշակոթողում է ոչ թէ միմիայն բազմաթիւ երկտաւոր աշխարհականներին, որոնց մեծ մասը առևտրի աննախանձելի գրութեան պատճառով ստիպված է լինում անգործ և շատ անգամ քաղցած թափառել մեծահուշակ քաղաքի փողոցներում,—այլ նոյն իսկ հոգեւոր հայրերին, որոնք նոյնպէս վարակված լինելով հարստանալու ցաւով, աշխատում են ամենայն միջոց գործ

ընելով՝ հաստատվել Բազուի մէջ: Այդ է պատճառը, որ պատահմամբ Բազուում մի երկու ամիս ապրող քահանան այլ ևս չէ ուղարկվել Բազուում իր պաշտօնատեղը և անտեղի կախների և տարածաշրջութիւնների պատճառ է դառնում:

Այսօր մենք ստիպված ենք արձանագրել մի վերին աստիճանի զգուշիլ զէպը մեր քահանաների կեանքից: Ներկայ թաւականի մեծ պատին, ինչպէս յայտնի է, մի քանի տղէտ և անկիրթ տիրացուներ քահանայ ձեռնադրվեցին Շամախու գաւառի մի քանի գիւղերի համար: Բացի մէկից, բոլորն էլ արդէն իրանց պաշտօնատեղում են: Այդ մէկն է՝ մի ոմն Ս. քահանայ Մ.—տղէտ և ամենատարրական կրթութիւնից զուրկ մի անձնագրութիւն, որը դարձեալ ձեռնադրված է Շամախու գաւառի մի քանի գիւղերի համար:

Չը նայելով որ մեծ պատից մինչև այժմ արդէն անցել է վեց ամիս, չը նայելով այն բազմաթիւ պաշտօնական գրութիւններին, որոնցով կոնստանդնուպոլիսի պատուիրէն է այստեղի գործակալ քահանային շուտափոյթ ուղարկել յիշեալ քահանային իր պաշտօնատեղը, այդ վերջինը դեռ հանգիստ կերպով շարունակում է ապրել Բազուում: Պատմում են, որ նա բոլորովին մոռելի չէ Բազուից հեռանալ և այդ նպատակով մի թուղթ, հաւաքած ստորագրութիւններով, ուղարկել է արդէն սխիզթ Բազուի վրա հաստատվելու նպատակով:

Այս արդէն չափից դուրս է: Բաւական չէ, որ մի տղէտը ձեռնադրված է որ և է գիւղի համար, նա դեռ յանդիմութիւն ունի ձգտելու քաղաքում մնալ: Մենք կը ցանկայինք իմանալ, ինչու արդեօք գործակալ քահանան ձգտում է գործը և չէ հրամայում յիշեալ քահանային ուղարկել զէպի իր պաշտօնատեղը: Մենք հաւատացած ենք, որ եթէ գործակալը այսուհետեւ ևս շարունակի պահպանել իր բռնած դիրքը այդ հարցի վերաբերմամբ, անպատճառ մեծ տարածաշրջութիւն կը ծագի:

Ֆ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 28-ին
Թոյլտուութեամբ պ. Նահանգապետի, համաձայն որոշման առաջին նախապատրաստական ժողովում ընտրված յանձնաժողովի, և համաձայն գրութեան յանձնաժողովի պատուաւոր անդամ պ. Սիմեոն Շահաղիյի պատու ունեւ թիֆլիսում ներկայ հայ գործիչներին, մանկավարժներին և գիտնականներին հրաւիրելու երկրորդ նախապատրաստական ժողովի, քննելու և ընդունելու համար յանձնաժողովի կազմած «Գրագիր կանոնադրութեան հայ գործիչներին, մանկավարժներին և գիտնականներին օժանդակող ընկերութեան»
Ժողովը կայանաւոր է հոկտեմբերի 2-ին, կիրակի օր, քաղաքային տան դահլիճում, առաւօտեան 11 ժամին:

Ա. Արաքսեանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԹԻՐ

Լսում ենք, որ Սասունի գաւառում սովը սաստիկ խիտ կերպարանք է ընդունել: Յուրա եղանակը աւելի անտանելի է դարձել այդ լեռնականների վիճակը: Խմանալով որ Բարձրագոյն թոյլտուութեան կողմէն հայերի մէջ հանգանակութիւն է եղել յօդուտ թրեւից հայաստանի սովաներին, աստուցիները, ինչպէս մեզ տեղեկացնում են, դիմել են Էջմիածին, և հանգանակված փողերից օգնութիւն են խնդրել իրանց համար:

Սեպտեմբերի 27-ին Բազու է հասել երկրագործութեան մինիստր Երմոլով:

Կ. Պոլսից մայրաքաղաքի «НОВОСТИ» լրագրի թղթակիցը գրում է հետեւեալը: Հայերը ժամանակ առ ժամանակ հաւաքվում են պատրիարքաւորում, Գում.Գափու, Կ. Պոլսի նոր պատրիարք ընտրելու նախապատրաստութիւններ տեսնելու համար,—բայց պատրիարքարանի երկու խորհուրդներին այդ ժողովները, պատրիարքական ժամանակաւոր փոխանորդ Հմայեան եպիսկոպոսի նախագահութեամբ, բաւարար հետեւանքներ չեն հանում այն երկիւղի պատճառով, որ աղղում

է նրանց վրա տեղական յեղափոխական կոմիտեաւոր Այն ժամանակից, որ հայերը համոզվեցին թէ միայնակ կոմիտեալ գոյութիւն ունի Կ. Պոլսում, և մասնաւոր սպանութեան մի քանի փորձերից յետոյ, թէ կրօնական և թէ քաղաքական ժողովների անդամները վախենում են իրանց կեանքի համար, որովհետեւ հանգամանքները այնպէս են դասադրված, որ նրանք կարծես թէ հաճոյանալ են ուղարկվելու կառավարութեանը: Այդպիսի պայմաններում եւսանդուն աշխատանք անհարկն է և խորհրդակցութիւնները դատարկաբանութեամբ են վերջանում:

Սեպտեմբերի 27-ին Էջմիածնից ստացանք հետեւեալ հեռագիրը տպագրելու համար. «Յայտնում եմ շնորհակալութիւն այն անձանց, որոնք շնորհաւորեցին ինձ: Ան ան ի ա և պ ի ս կ ո պ ո ս »

Մենք չենք կարող մեր դարմանքը չը յայտնել, որ մինչդեռ մի կողմից թիւրքաց Հայաստանի զանազան գաւառներում սաստիկ սով է տիրում, և մարդը ուտելու հաց չունեն, միւս կողմից սովեալների օգոյն հաւաքած փողերից 2,000 ր. Կ. Պոլսի պատրիարքարանում է մնում, իսկ 5,000 րուբլի էրբոլում առաջնորդարանի մէջ է ընկած, և ով գիտէ ինչ ձեռքբերում... Միթէ, ճշմարտ, էլի հարկաւորութիւն կայ մարդկանց յիշեցնելու մի այնպիսի տարրական ճշմարտութիւն, թէ սովեալների օգոյն հաւաքած փողերը սովեալներին պէտք է արվեն, և ոչ թէ այստեղ և այնտեղ ընկած մնան:

Սեպտեմբերի 26-ին Թիֆլիսի քաղաքապետ իղմայով հեռագրով շնորհաւորեց Վնախաւ Կաթողիկոսի օժման տարեդարձը:

Սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսի Կալուածական բանկի շինութեան մէջ տեղի ունեցաւ վրաց Կրթամատակական ընկերութեան ժողովը: Ներկայ էին ընկերութեան անդամները 13 հոգի և բաւական կողմնակի անձինք: Այդ ժողովում վճռվեց այս անգամ վրաց ներկայացուցիչների գործը յանձնել մի առանձին խմբի ձեռքը, տարով նրան 500 ր. նպաստ, թատրոնական շրբեր և պիէսներ: Նոյն ժողովում ընտրվեցին Կրթամատակական ընկերութեան վարչութեան պակաս անդամների տեղ նոր անդամներ:

Հոկտեմբերի 8-ին Թիֆլիսի դատաստանական պալատում պէտք է ընկնէ Ս. Սպանդարեանի դատաւար, որով նա մեղադրում է իւ. Սալուսեանին զրպարտութեան մէջ:

Այլի առաջ ունենալով այն հանգամանքը, որ շատ տեղ ճարտարապետների ձեռքով շինած տները լինում են խախտու և շատ անյարմար, ներքին գործերի մինիստրութիւնը վճռել է այսուհետեւ թող չը տալ, որ ճարտարապետական ուսումից զուրկ անձինք ենթարկվեն հարցաքննութեան և ստանան մասնագէտների վկայականներ:

Սեպտեմբերի 26-ին Թիֆլիսի Եւրոպական համարների կալվող հիւրանոցում անձնապատուութիւն գործից մի վրացի երիտասարդ, իշխան վաղիմիր Ներկեթի: Վերջին ժամանակներս նա վարում էր պրիստաւի պաշտօն Բորչալուի գաւառում: Նա թողել է նամակներ, որոնց մէջ խնդրում է ոչ ոքի չը մեղադրել իր սպանութեան համար: Սպանութեան պատճառը, ասում են, կեանքի ձախուրդ հանգամանքներն էին:

Սեպտեմբերի 22-ին, Մոսկվայում, ինչպէս հաղորդում է «Рос. Вѣд.» լրագիրը, անձնապատուութիւն գործից բազուցի վաճառական Միրզաբեկ խղբաչէլ:

Գիֆտերիտի բժշկութեան նոր միջոցի մասին այժմ խոսում է ամբողջ բժշկական աշխարհը: Պարիզում, Պատեօրի կայսրանում արած փորձերը ցոյց տըւին, որ պատուաստման եղանակը կարող է արմատական կերպով բժշկել գիֆտերիտով հիւանդին: Այժմ արդէն գտնված է հեղուկ, որը սրկեւում մարմնի մէջ՝ ազդում է դարձնում հիւանդին վատագուր հեռանկարից: Այժման փորձերով աղղում է մահերի թիւը նուազացնել մինչև 50%:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ Եւ հայ մեղ գրում է հետեւեալը. «Եւստի տպագրութիւն թողցն մեղ վրա «Մը- շակի» № 104-ի մէջ տպած «Ան վարժունք» վերնագրով յօդուածը: Այդ յօդուածի վերջում դուր անկայնութիւն էր. — ինչպէս անուանենք այն վարժունքը, որ «Արձագանքը» իրան թոյլ է տը- լել, բայց անելով մի թղթակցի անուն, այն է Հայկական անունը թոյլ տուէր ինձ, որպէս կողմ- նակի մարդու, անուանել «Արձագանքի» վարժունքը «Լրագրական լրբութիւն»: Գուցէ ձեր ականջին խորթ հնչին այդ բառերը, բայց հա- լատացնում ենք ձեզ, որ այդ նոյն բառերը մենք պատահամբ գտանք «Արձագանքի» մէջ: Այդ թերթը մի պարոնի վրա յարձակվում է նրա նոյնանման վարժունքի պատճառով, ասելով «...Գա անկանոն և անվայել գործ է, դրան պէտք է անուանել կամ լրագրական լրբութիւն և այլն»: Այս բոլորից յետոյ, թողնում ենք ըն- թերցողին դատել» թէ ինչ անկանոն է հասել այդ հակասող թերթերը:

ՇՈՒՇՈՒՅ մեղ գրում են. «Այսօր, սեպտեմբերի 25-ին, տեղի ունեցաւ, վերատեսուչ Զուգինի նա- խագահութեամբ, Մարիյն սկի օրիորդաց ու- սումնարանի հանդիսաւոր բացումը: Հանդիսին խորհայ էր խուռն բաղմութիւն: Մարիյնը կա- տարելուց յետոյ, Զուգինի և հոգաբարձու Ասրիբե- կեանցը մի քանի խօսքերով բացատրեցին այն օգուտը, որ սպասվում է այդ ուսումնարանից: Իշխական ուսումնարանի աշակերտական երա- ժշտական խումբը նուազեց մի քանի անգամ»:

ԳԱՆՁԱԿԻՅ մեղ գրում են. «Ապտեմբերի 25-ին դերասանուհի Զարեկը և դերասան Սարգսեա- նը, սիրողներ ժամանակցութեամբ, ներկայաց- րին «Անբաղը սէր» դրաման, թարգմանութիւն իտալիացիից: Ներկայացումը ընդհանրապէս շատ անշոք անցաւ. անտարկանքներն նուազում էր մի թաւ ածող, իսկ մի ուրիշ թուրք երգում էր թուր- քերէն երգեր: Անգուստ վրթկոյցը խլացնում էր թուրք երգէի ձայնը, երբ նա իր թղթական ակ- ցնետով երգում էր «Եղիաթաւալ» և «Լուսնակի գիշեր»: Մուտքը մեղ յայտնի չէ, միայն խմացանք, որ օտար դերասանները 25 բուրլի դեֆիցիտով վերադարձան թիֆլիս: Եւ դեռ Գանձակը նահան- քական քաղաք է համարվում...»

ԳՐԻՍԻՍԻՅ, հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեղ տպել հետեւեալը. «Թոյլ տուէր ձեր լրագրի միջոցով յայտնել մեր խորին շնոր- հակալութիւնը մեր հայրենակից պ. Առաքել Ծա- տուրեանցին, որ իր հայրենիքը այցելած ժա- մանակ նուիրեց Գրիսի հայոց երկսեռ ծխական դպրոցին 150 բուրլի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ մեղ գրում են. «Պալլադիկ կա- յարանի սեղօնի փակումը տեղի ունեցաւ սեպ- տեմբերի 14-ին: Կայարանի մեծ դահլիճում նա- զում էր օրկեստրը, Գալիկինի ղեկավարութեամբ: Խմբին մասնակցում էր նոյնպէս հայ դերասան Թովհանէս Նալբանդեանը, նա solo նագեց ջու- թակի վրա մեծ աշխուժեամբ և երեք անգամ բեմ կանչվեց. հանդիսականները առատօրէն վար- ձաւորեցին նրան իրանց ծափահարութեամբ: Բաղ- մութիւնը մեծ էր»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ՄԱՀՄԵՏ-ԳԱՆՆԵՐԻ ԵՒ ԲԻՐԻՍ- ՏՈՆԵԱՆԵՐԻ ՄԷՁ

Վերնաշախից, սեպտեմբերի 16-ից (28-ին) «Daily News» լրագրին գրում են հետեւեալը. «Կ. Պոլսից այստեղ ստացված տեղեկութիւն- ների համեմատ, Հայաստանում շատ ծանր ընդ- հարում տեղի ունեցաւ թիւրք ժանդարմների և քրիստոնեաների մէջ: «Գերիմ-բէյ, զանգարմների գլխաւորը Լիբանա- նում, թօքաւոր գնաց մի մեծ դրամաբեմով կալա- նաւորելու այնտեղ մի նայ փախստականի, որը, որպէս ենթադրում էին, զանգնված էր թօքա- տում: Այնտեղ հասնելով, Գերիմ-բէյ անյայտ դարձաւ խուզարկութիւնների անել տեսնում: Խուզարկութիւններ անող ոստիկանութիւնը գի- մարութեան հանդիպեց, և այդ պատճառով ընդ- հարում տեղի ունեցաւ, որի ժամանակ մի քանի հայեր սպանվեցին, մի քանիսն են էլ վիրաւորվե-

ցին: Այդ ժամանակ ոստիկանութիւնը հայերի աներից մէկը կատարեալապէս քարուքանդ արաւ: Ներկայումս այդ գործի առիթով քննութիւն է կատարվում: Մահմեդական ազդաբնակութեան մէջ մեծ գրգռումն է նկատվում քրիստոնեաների դէմ»:

ՄԱԳԱՍՏԱԿԱՐԻ ՀԱՐՑԸ

Վերջերս լրագրիները սկսեցին տեղեկութիւն- ներ հաղորդել, որ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ տարածայնութիւններ են սկսվել Մաղազասկար կղզու առիթով, և այդ տարածայնութիւնները այնպիսի սուր կերպարանք են ստացել, որ կարող է պատերազմ սկսվել Ֆրանսիայի և Անգլիայի մէջ:

Ֆրանսիան և Անգլիան վաղուց է, որ մրցում են Մաղազասկարի համար: Յեղափոխական պա- տերազմների ժամանակ Անգլիան ժամանակաւորա- պէս զրուեց Ֆրանսիական ամրոցները այդ կղզու վրա, բայց Վէրմայի կոնգրեսում, 1815 թ-ին, ստիպված էր վերադարձնել այդ ամրոցները Ֆրանսիային: Սակայն Անգլիան իր կողմից աշ- խատեց և աշխուժեց, որ Մաղազասկարի թա- զաւորութիւնը անկախ լինի և կատարելապէս չենթարկվի Ֆրանսիային: Այնուամենայնիւ, Ֆը- րանսիային աշխուժեց 1885 թ-ին մի դաշնագրի կապել Մաղազասկարի թագուհու հետ, որի հի- ման վրա Մաղազասկարը ընդունում էր Ֆրանսի- սիայի հովանաւորութիւնը, այսինքն պարտաւոր- վում էր արտաքին յարաբերութիւններ սկսել և դաշնագրիներ կապել օտար պետութիւններ հետ անպատճառ Ֆրանսիական կառավարութեան գի- տութեամբ և համաձայնութեամբ: Գաշնագրից ապահովում էր նոյնպէս Ֆրանսիացիների առեւտ- րի ազատութիւնը, հոգեւոր միասնանքի գործու- նեցութիւնը և այլն:

Այդ դաշնագրից, որ Անգլիան ևս ընդունեց 1890 թ-ին, չապահովեց սակայն Ֆրանսիայի դրութիւնը Մաղազասկարում: Տեղական մաղա- զասկարան կառավարութիւնը, հակառակ իր յանձն առած պարտաւորութիւնների, յարաբերու- թիւններ էր կապում օտար պետութիւնների հետ, տալով նրանց զանազան առեւտրական և արդիւնա- բերական արտօնութիւններ ի վնաս Ֆրանսիացի- ների: Ֆրանսիական դաղթականների վրա յանձնա- յարձակումներ էին գործում տեղացիները, մինչև անգամ թագաւորութեան մայրաքաղաքում և այլն:

Այդ բոլորը դրեց Ֆրանսիային Մաղազասկար ուղարկել իր ներկայացուցչին՝ պահանջելով, որ Ֆրանսիայի հետ այնպիսի մի նոր դաշնագրի կապվի, որը ոչ միայն հաստատի 1866 թ-ի դաշնագրի՝ Ֆրանսիական հովանաւորութեան մասին, բայց և Ֆրանսիային իրաւունք տրվի միջամտել երկրի ներքին գործերում: Այդ պա- պանջները ըստ երևոյթին չընդունվեցին:

Հակառակ է, որ Անգլիան անտարբեր չէ կա- ռող վերաբերվել գործերի մի այդպիսի դրութեա- նը: Նա, ընդհանրապէս, վախենում է, որ Ֆրանսի- սիան պատերազմական արշաւանք սկսելով Մա- ղազասկարի դէմ, վերջը ամբողջապէս կը գրաւի այդ կղզին: Սակայն արշաւանքի հետեանքները դեռ թաւում են անդիպացիների յիշողութեան մէջ, և այդ պատճառով վախենում են, որ Մաղազաս- կարը կորցնելով, անգլիացիները կը գրկվին ի- րանց առեւտրական մի նշանաւոր շուկայից: Յայտ- նի է, որ Մաղազասկարի առեւտրի չորս հինգերորդ մասը անգլիացիների ձեռքումն է:

Ահա թէ ինչու սուր կերպարանք են առել Անգլիայի և Ֆրանսիայի փոխադարձ յարաբերու- թիւնները:

ԱՋԱՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԸ

Կ. Պոլսի լրագրիները մէջ կարգում են հետե- լեալը. «Մանիդեօս» կը յիշատակէ վրոյց մը, որ հուռնական-հայերու մէջ կը պղծուի եղբի Ըստ այս գրոյցին, Հուռն պապը իր բարձր համար- ման ի նշան որոշած է կարդնալ անուանել Աղարեան պատրիարքը, որ պատրիարքական պաշ- տօնին հրամարելով պիտի մեկնի Պոլսէն: Մոնի- դեօս» յիշելով այս բարձր կաւելցնէր թէ Պապին կողմէ ըլլալը այս շնորհ կապացուցանէ թէ ի նկատի չեն առնուած Աղարեանի դէմ քանի մը եկեղեցականներու դանդաղանքը ի մասին իրենց ամակամներուն ղեղաձում:

«Սիմամուլ» այս ուղեւորութեանը կուտայ ու- լիշ նապատակ մը, հրատարակելով հետեւեալ լու-

րը. «Իտալական թերթերը կը ծանուցանեն թէ Պապին կողմէ արեւելքիներուն ուղղուած շրջա- բերական թուղթը ցրուել պիտի տան Աղարեանի Հուռն հասնելէն յետոյ, ուր երթալու համար Պոլ- սէն պիտի մեկնի հոկտեմբերի սկիզբը: Այս լու- րը տրուած է «Եկեղեցիներու միացումը» վերնա- գրին տակ, ուրից բանաւոր է հետեցնել թէ Աղարեան Հուռն կերթայ այս վերջին խնդրին համար, որուն այդքան փարած է Լուսն Ժ.Գ. Պա- պը»:

Աղարեանի մասին «Temps» լրագրին գրում են Հուռնը հետեւեալը. «Հետոյ կը գայ Հուռն, Լուսն XIII պապի յատուկ հրաւերով, հայու- նիստների հոգեւոր պետ Աղարեան պատրիարքը: Պապը կամենում է խօսել նրա հետ հայ և հուռ- մէական եկեղեցիները շուտով միացնելու միջոց- ների մասին: Յայտնի է, որ այդ միութեան միտ- քը ներկայումս պապի ամենազիլաւոր հոգեւորից միսն է կազմում: Պատրիարք Աղարեան թէ լա- տինական և թէ արեւելեան եկեղեցական աշխա- րում շատ ծանօթ անձն է»:

ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԸ ԵՒ ԹԻՒՐԿԱՅ ԿԱՌԱ- ՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիայի յունաց պատրիարքարանում յուզմունք է տիրում. — գրում են մայրաքաղաքի բուսաց լրագրիներին Կ. Պոլսից: Յոյները դժգոհ են իրանց Նէօֆիտ VIII պատրիարքից այն զիջում- ների պատճառով, որ նա արաւ բողոքներին Մա- կեդոնիայում: Առնաւորապէս յոյները իրանց պատ- րիարքին մեղադրում են թուրքութեան մէջ և նրան անշոք են համարում կուսելու կառավարութեան դէմ: Եկեղեցական ժողով դուռնաբերու նպատակով ուղղափառ եկեղեցիներին դիմելով, պատրիարքա- կան խորհրդի հրաժարական տալը և այլ միջոց- ները, որոնցով սպառնում էին կառավարութեա- նը, անկատար մնացին ի լրումն չարեաց, Բ. Գուռը, տեսնելով պատրիարքարանի թուրքութի- լը, պահանջեց, որ թիւրքաց լեզուի դասաւու- թիւնը պարտաւոր լինի Ֆրանսիայի կախում ունեցող բոլոր դպրոցներում, և յոյների ծախսով կատարվի:

Այդ կարգադրութիւնը մեծ դժգոհութիւն յա- րուցեց, շատ կարելի է, որ պատրիարքը, վերջա- պէս կը վստահանայ հրաժարական տալ: Աղբիւ- ռուպով միտքափոխ Վերիլը նորիս կծու յանդի- մանութիւն արեց պատրիարքին. պատրիարքը ստիպեց նրան դուրս գալ սինոդից և վերադառ- նալ իր թեմը:

Աղբիւնութիւն ունեցող շատ յոյներ համարում են միտքափոխ Վերիլին, և ասում են, որ Նէօ- ֆիտ VIII շատ զիջող և թոյլ բնաւորութեան տէր մարդ է: Նրա անվտանգութեան և անվճառ- դակաւորութեան հետեանքը այն կը լինի, որ յու- նաց պատրիարքարանը կատարեալապէս կենթարկ- վի թիւրքաց կառավարութեանը: Բացի դրանից, Նէօֆիտ պատրիարքին կասկածում են, թէ նա համարում է արեւելեան և արեւմտեան եկեղեցի- ների միացման դադափարին և պապի վերջին կոնդակին:

Ուղղափառ յոյն համայնքը անընդունակ է հա- մարում Նէօֆիտ VIII-ին պատրիարքական պաշ- տօնի համար այժման ծանր պայմաններում:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՍՈՒՆԻՅ

Սալմաստ, սեպտեմբերի 5-ին Հարստահարութիւն, սպանութիւն, կողոպտում, — ահա Սալմաստի ներկայ վիճակը: Հարստահա- րութիւն՝ բեղերի և խաների կողմից, սպանու- թիւն՝ անձաբձակ և արեւնարեւ քիւրդերի կող- մից, կողոպտում՝ զանազան զիմակներով երևան եկող և ժողովրդի տառապանքների վրա «Կոկոր- դիլուսեան արցունքներ» թափող, ուղղակի և անուղղակի կերպով նրա ձեռքի պատառ խլող- ների կողմից... Այն բարբարոս խաները, որոնք տառնակ տարիներ ից ի վեր, պատապարված ի- րանց օրջերում, չէին անդիմում դուրս գալ, այս տարի, տեսնելով ժողովրդի անտէր և անպաշտ- պան դրութիւնը՝ համարձակ մտնում են հայ գիւ- ղերը, կողոպտում, ծեծում, անպատուում... Երբ- ւրեք, կողոպտում, ծեծում, անպատուում... Երբ- վրեք, զիմում է նրան, որը իր ներկայացուցչին է համարվում կառավարութեան առջև, տեղացի- րից մի քանի տասնեակ պատգամաւորներ է ու- ղարկում թաւրիդ, որ իր արդարացի բողոքները լսելի անել տայ, իր իրաւունքները պաշտպանի,

բայց դեռ նոր քաղաք մտած՝ քշվում են դէպի բանտը: Թէ ինչու համար՝ ոչ թէ իրանք միայն չը դիտեն, այլ և տանողները: Միայն այսքանը դիտեն, որ նրանք այժմ դուրս են նախկին իս- րահիմ և կարելի է նրանց բանտարկել ու մի քանի թուամս պոկել...

Թիւրքիան չը բաւականապէս տեղացի հայե- րի արեւը ծծելով, իր քուրդ հրատակներն քշում է դէպի Պարսկաստան, Սալմաստ, այստեղի հայե- րին ևս ջնջելու և Սալմաստը Աղբիւնի պէս ա- մայի դարձնելու հրահանգներով: Ժողովուրդը իր տպաւորութիւն միջոց եղող վերջին եզր ծա- խում է և հեռագրիներին վճարելով՝ տեղեկաց- նում առաջնորդին, թէ վանքերն ու եկեղեցիները կողոպտեցին, և օգնութիւն խնդրում: Անցնում են իրար ետեկից շարքեր, և դուրս էլի շատ ամիսներ կանցնեն, բայց ոչ մի պատասխան այն- տեղից...

Բայց այս բոլորին դեռ մի կերպ էլի կարելի է դիմանալ, այլապէս կը դիտենք հոս գիշատելով- ների հետ: Այս տարի հարստահարչների մի նոր տեսակ է երևան եկել, որը շատ քաղաքա- վարի կերպով մտնում է գիւղերը և ժո- ղովրդից կը թուրքեցնէ անունով հարկ պահան- ջում: Վայ դիւղացիներին, ինչէ՛ նրանք յան- դգնեն նրա որոշած հարկը չը վճարել, միւս օրը նա կը մանի այդ գիւղը ոստիկաններով (պարիարատ) և բռնի կերպով կը պահանջի ոչ թէ որոշած հարկը, այլ և ոստիկանների ծախսը: Ասում են առաջնորդը այդպիսի մէկին Սալմաստի տեսուչ է կարգել. բայց մենք լսել ենք տեսուչը դո- նէ ուսման հոտ առած կը լինի, ուսումնարանի մա- սին դադափար կուռնենայ, ժողովրդի հետ վարվե- րու կերպը կը գիտենայ և ոչ թէ վանի Տէր-Թո- դիկներից մէկի մօտ սաղմոս ու ժամագիրքը կը վերջացնի և հայկառակ թերթերից մէկի մէջ զանազան աւարտան մարդկանց հասցէին բէկլամ- ներ տպելու շնորհիւ՝ ձեռք կը բերի մի այդպիսի ծանր և պատասխանատու պաշտօն, որպիսին է թեմական տեսուչութիւնը: Թշուառ ժողովուրդ, յանուն կը թուրքեցնէ՝ հարստահարում են քեղ, յանուն բարօրութեան՝ կեղերում...

Անցեալներում, ժողովրդին ղեկավարողները միշտ աշխատում էին, ամեն ճիշդ թափում, որ պարսիկները աղապին ներքին գործերի մէջ չը միջամտեն. այժմ զանազան անմիտ ղեկավարող- ներ, իրանց ազատ և շահամոլ գործակիցներով՝ ի- րանք են հրաւիրում պարսիկների միջամտութիւ- նը, որի արդիւնքը ժողովրդի կրկնակի հարստա- հարութիւնն է լինում: — Սալմա գիւղացի մի վա- ճառական, որը պարսիկ և Ռուսաստանում, զբղի- վելով իր կնոջից՝ գալիս է հայրենիք նորից ա- մուսնանալու: Նա գնում է Մահլա գիւղը, նշան տալիս այնտեղ ապրող այրի մի կնոջ, որի մասին իրան խորհուրդ են եղել տուած, և առանց զիշե- րը մնալու, վերադառնում է Սալմա՝ հարսանիքի պատրաստութիւն տեսնելու: Բարեկամները իմա- նալով նրա նշանագրութիւնը մահլաւցի կնոջ հետ, զանազան պատճառներով ստիպում են թողնել նրան, և ամուսնանալ իրանց գիւղ- ցացի մի այլ կնոջ հետ: Խեղճ վաճառականը հա- մոզվում է, նոր նշան է տալիս և մի քանի օրից յետոյ Սալմաստի առաջնորդական փոխանորդը պատկում է նրանց:

Նախկին այրին այս իմանալով՝ դիմում է տես- չին (որը երբեմն-երբեմն չէ զանում փաստաբա- նութիւն ևս անել) և խնդրում նրա աշակցութիւնը: Պարսի տեսուչը չը դիտենք ինչ է գրում թաւ- րիդ, առաջնորդին, միայն այսքանը գիտենք, թինչ վաճառականը, քան օրվա ամուսնացած՝ պատ- րաստվում էր ընտանիքով գնալ Ռուսաստան՝ իր ընակալայրը, մտնում է Սալմա Սալմաստի սար- փարատք մի քանի ֆարաշներով և պահան- ջում վաճառականին: Սարփարատքը ցրց է տա- լիս նրան առաջնորդի ուղարկած հրամանագիրը (ոստիկանի անունով), որով պահանջում է իրա- նից ստիպել վաճառականին, որ թողնի իր կնոջը և ամուսնանայ առաջին նշանագրութիւն հետ: Խեղճ վաճառականը յայտնում է նրան, որ ինքը ա- մուսնացել է առաջնորդական փոխանորդի հրա- մանով, և թէ՛ հայ եկեղեցու օրէնքով, կարելի է նշանաւորել թողնել, իսկ ամուսնացածին ոչ: Բայց ոստիկանը խիտ կերպով պահանջում է դործա- դրել առաջնորդի հրամանը, ինչէ՛ ոչ ինքը կը լուի և կը պահի նրա ամուսնացած կնոջը՝ մինչև նա կամուսնանայ իր նախկին նշանածի հետ: Վաճա-

